Հաստատում եմ

Հայաստանի Հանրապետության

կրթության և գիտության նախարարության

գիտության պետական կոմիտեի նախագահ

Ս. Հարությունյան

(*ստորագրություն*)

Կ.Տ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երևանի պետական համալսարանի
և
Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) միջև
Տեսական ֆիզիկայի համատեղ լաբորատորիայի ստեղծման մասին

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, այսուհետ՝ ԵՊՀ, ի դեմս ռեկտոր Ա. Սիմոնյանի, որը գործում է ԵՊՀ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը, այսուհետ՝ ԱԱԳԼ, ի դեմս տնօրեն Ա. Չիլինգարյանի, որը գործում է ԱԱԳԼ կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ՝ միասին՝ Կողմեր,

ցանկանալով համատեղել ջանքերը տեսական ֆիզիկայի բնագավառում գիտական և գիտակրթական աշխատանքների իրականացման, կադրերի պատրաստման և վերապատրաստման, այդ թվում՝ մագիստրոսական, ասպիրանտական և հետդոկտորանտական ծրագրերի մշակման և ներդրման, ինչպես նաև միջազգային նախագծերի կատարման ուղղությամբ,

նպատակ ունենալով ընդլայնել Հայաստանի Հանրապետության գիտնականների և մասնագետների ներգրաբվվածության մակարդակն Աբդուս Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի, այսուհետ՝ ՏՖՄԿ, կողմից իրականացվող միջոցառումներում, այդ թվում՝ մասնագետների փոխանակման ծրագրերում,

հիմք ընդունելով 2013 թվականի մայիսի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Աբդուս Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի միջև կրթության և գիտության ոլորտներում համագործակցության մասին» պայմանագիրը,

սույնով համաձայնեցին ԵՊՀ-ի և ԱԱԳԼ-ի Տեսական ֆիզիկայի համատեղ լաբորատորիայի, այսուհետ՝ ՏՖՀԼ, ստեղծման և գործունեության ապահովման համար հետևյալ պայմաններին և պարտավորություններին.

1. ՏՖՀԼ-ն ստեղծվում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի և ԱԱԳԼ տեսական ֆիզիկայի բաժանմունքի բազայի հիման վրա:
2. ՏՖՀԼ-ն ստեղծվում է Կողմերի կողմից տեսական ֆիզիկայի բնագավառում իրականացվող գիտական և գիտակրթական աշխատանքների արդյունավետության բարձրացման և այդ բնագավառում Հայաստանի Հանրապետությունում կատարվող հետազոտությունների միջազգային ճանաչելիության մակարդակի աճի նպատակով:
3. ՏՖՀԼ-ի գործունեությունն իրականացվում է կանոնադրության հիման վրա, որը սահմանված կարգով հաստատվում է Կողմերի կողմից:
4. ՏՖՀԼ-ի գիտական գործունեության հիմնական ուղղություններն են՝
   1) քվանտային դաշտերի և լարերի տեսություն
   2) մաթեմատիկական ֆիզիկա
   3) տարրական մասնիկների ֆիզիկա
   4) գերբարձր էներգիաների գամմա- ճառագայթների ֆիզիկա
   5) հոծ միջավայրերի ֆիզիկա
   6) արագացուցչային ֆիզիկա
   7) մաթեմատիկա:
5. ՏՖՀԼ-ի հիմնական խնդիրներն են՝
   1) տեսական ֆիզիկայի տարածարջանային կենտրոնի ձևավորում,
   2) համատեղ հետազոտական աշխատանքների իրականացում,
   3) համատեղ ուսումնական, այդ թվում՝ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի մշակում և ներդնում,
   4) համատեղ գիտական և (կամ) գիտակրթական դրանաշնորհային նախագծերի պատրաստում և իրականացում,
   5) համատեղ գիտական միջոցառումների, այդ թվում՝ գիտաժողովների, երիտասարդական դպրոցների կազմակերպում,
   6) ՏՖՄԿ հովանու ներքո գիտական միջոցառումների կազմակերպում,
   7) ՏՖՄԿ հովանու ներքո մագիստրոսական, ասպիրանտական և հետդոկտորանտական ծրագրերի իրականացում:

6. ՏՖՀԼ-ն ունի երկու համաղեկավար՝ յուրաքանչյուր Կողմից մեկական ղեկավար: ՏՖՀԼ-ի կազմի մեջ կարող են մտնել ԵՊՀ և ԱԱԳԼ աշխատակիցները:

7. ՏՖՀԼ-ի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0036, քաղ. Երևան, Ալիխանյան եղբայրների փող. 2, Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ):

8. ՏՖՀԼ-ի գույքի և ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են՝

1) Կողմերի կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը,
2) Կողմերի կողմից իրենց աշխատակիցներին հատկացված աշխատանքի վարձատրության միջոցները,
3) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն,
4) ՏՖՄԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները,
5) դրամաշնորհները,
6) ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների գիտական և (կամ) գիտակրթական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային գիտական կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցները,
7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրները:

9. Սույն պայմանագիրը կնքվում է՝ հինգ (5) տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

10. Սույն պայմանագրի դրույթների կիրառման հետ կապված ցանկացած անհամաձայնություն կլուծվի բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

11. Սույն պայմանագիրը կարող է դադարեցվել, եթե Կողմերից որևէ մեկը երեք (3) ամիս առաջ գրավոր ծանուցում է մյուս Կողմին իր համապատասխան մտադրության մասին:

Սույն պայմանագիրը կատարված է երեք (3) բնօրինակից, ք. Երևանում, 2015 թվականի հուլիս 22-ին:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ա. Սիմոնյան	«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի տնօրեն Ա. Չիլինգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.